Հուշագրություն

13+

ՄԿՐՏԻՉ ԱՐՄԵՆ

«ԳԱԼԻՍ Է ՓԱՅԼՈՒՆ ՄԻ ԴԱՐԱՇՐՋԱՆ...»

Խարույկով խարկենք

Գիշերներ կապույտ,

Մենք պիոներներ ենք՝

Բանվորի սերունդ:

Գալիս է փայլուն

Մի դարաշրջան,

Միշտ եղիր պատրաստ՝

Պիոներ ժրաջան…

Հնչում, հնչում է իմ ականջին այդ երգը՝ իմ և իմ սերնդի պատանեկության երգը…

Դա ստեղծվեց ոչ ամենասկզբում, այլ մի քիչ հետո, բայց, միևնույնն է, վերաբերում է նաև իրեն նախորդող տարիներին:

«Գալիս է փայլուն մի դարաշրջան...»: Մենք դա չգիտեինք, բայց զգում էինք դեռ այն ժամանակ, երբ այդ դարաշրջանը դեռ չէր էլ սկսել իր հաղթական երթն իմ բազմաչարչար հայրենիքով:

«Գիշերներ կապույտ...»: Արդյոք այդ կապույտ գիշերները չէ՞ր, որ երազում էինք մենք այն սև գիշերներին, այն սև օրերին, երբ բոլորս, սոված ու ցնցոտիավոր մանուկներ, բաղձում էինք լավ ապագայի: Եվ այնքան էինք բաղձում, որ այդ բաղձանքը փոխվում էր հավատի:

«Խարույկով խարկենք...»: Պիոներական խարույկի, ճիշտ է, ոչ լույսը, բայց հույսը խարկում էր այն սև գիշերներն ու օրերի, և մենք բոլորս պատանեկան լավատեսությամբ սպասում էինք երջանիկ օրերի, երբ ինքներս կվառենք այդ խարույկը…

Մի քանի տարի սրանից առաջ, մի դպրոցում, որտեղ ես հանդիպում ունեի իմ պատանի ընթերցողների հետ, մի աղջիկ իմ վզին կապեց պիոներական վզկապ: Ճիշտ այդպիսի վզկապ կար նաև նրա վզին: Գուցե հենց նույն կտորից էին կտրված այդ երկու վզկապները, և եթե դրվեին իրար մոտ, ապա եզրերը պիտի համընկնեին իրար:

Գիտե՞ր արդյոք այդ աղջիկը, որ ոչ թե նոր վզկապ էր կապում իմ վզին, այլ ինձ վերադարձնում էր իմ երբեմնի վզկապը... Նկատե՞ց նա արդյոք, որ ես հազիվ էի զսպում իմ հուզմունքը: Ամեն ինչ կտայի ես այդ րոպեին, եթե լինեի պատանի և իմանայի նաև երգել, որպեսզի երգեի ամբողջ կոկորդով.

Խարույկով խարկենք

Գիշերները կապույտ,

Մենք, մենք, մենք,

Ես էլ ձեզ հետ,

Մենք պիոներներ ենք՝

Բանվորի սերունդ…

1

Դաշնակների տիրապետության ժամանակ ես 12—13 տարեկան էի: Ապրում էի Լենինականում, այն ժամանակվա Ալեքսանդրապոլում:

Ես սխալ ասացի, թե «ապրում» էի: Ես մահանում էի ամբողջ ժողովրդի հետ միասին: Եվ եթե ողջ մնացի, մի՞թե չմահացան հարյուր հազարավոր ուրիշները…

Ալեքսանդրապոլն ուներ իր «նահանգապետը»՝ Կարո Սասունի: Եվ կար նրան անվանակից մի լակոտ՝ Սասունիկ: Եվ ահա, Ալեքսանդրապոլում ստեղծվեց սկաուտական կազմակերպություն, իսկ Սասունիկը դարձավ դրա ղեկավարը:

Այդ Սասունիկը լավ պահած և երես տված մի տղա էր, որի բառարանում կային երկու գլխավոր բառեր. «ուզում եմ» և «չեմ ուզում»: Նա սովորել էր, որ կատարվեն իր բոլոր ցանկությունները և չկատարվեն այն ամենը, ինչը որ նա չէր «ուզում»:

Բազմաթիվ և բազմաթիվ երեխաներ չոր հացի կտոր չունեին ուտելու և խոտ էին արածում անասունների պես, իսկ Սասունիկը կարող էր ասել՝ «ուզում եմ պիրոժնի»,— և իսկույն կունենար պիրոժնի: Հետո, իսկույն, նա կարող էր ասել՝ «չեմ ուզում այս տեսակ պիրոժնի, ուզում եմ ուրիշ տեսակ»,— և կունենար ուրիշ տեսակ:

Իմ կարծիքով, սկաուտական կազմակերպությունը նույնպես, նրա անվանակից նահանգապետն էր ստեղծել՝ նրա հերթական կամակոր «ուզում եմ»-ը բավարարելու համար: Իհարկե, եթե Սասունիկն ասեր՝ «չեմ ուզում սկաուտական կազմակերպություն», վերջինս չէին ցրի, որովհետև դա դաշնակներին հարկավոր էր՝ դաստիարակելու համար պատանիներին իրենց ոգով: Այդ դեպքում կազմակերպությունը կապրեր իր համար, իսկ Սասունիկը՝ իր:

Բայց Սասունիկն «ուզում» էր ունենալ սկաուտական կազմակերպություն, ինչպես ուներ ձի, ծառա, շնիկ և այլն:

Մասսայական բնույթ չուներ Ալեքսանդրապոլի սկաուտական կազմակերպությունը, բայց և այնպես այնտեղ կային բավական քանակությամբ պատանիներ:

Ինչպես դաշնակցական Հայաստանում ընդհանրապես, այնպես էլ այդ կազմակերպության մեջ, կային դասակարգեր, տեր ու ծառա: Սկաուտների մեծ մասը նրա համար էր, որ ենթարկվեր դաշնակներին, «լիներ հավատարիմ աստծուն ու հայրենիքին»: Իհարկե, դաշնակցական հայրենիքին:

Իսկ սկաուտների փոքրամասնությունը՝ Սասունիկի ղեկավարությամբ…

Լենինականում կա զբոսանքի մի շատ գեղեցիկ վայր, որ կոչվում է Չերքեզի ձոր: Համարյա ամեն օր այնտեղ էր գնում Սասունիկը՝ շրջապատված տղաներով ու աղջիկներով, հարբեցողությամբ զբաղվելու, զվարճանալու համար: Քանի՜-քանի անգամներ եմ ես տեսել պատանեկական կազմակերպության այդ «ղեկավարին»՝ հարբած, հալից ընկած: Նրա շքախմբի տղաներն ու աղջիկները քնքշությամբ նրա թևերն ընկած, քաղաք էին բերում նրան: Իսկ նա անդադար բացականչում էր՝ «ուզում եմ», «չեմ ուզում»... Եվ նրանք շտապում էին գոհացնել նրա բոլոր ցանկությունները:

Ի՜նչ լավ էին հագնված այդ անպիտան տղաներն ու աղջիկները... Սկաուտական հիանալի համազգեստներ, լայնեզր գլխարկներ, ձախ ուսերի վրա գունավոր ժապավեններ, էլի ուրիշ նշաններ ու զարդեր…

Ինչպիսի նախանձով էինք նայում նրանց մենք՝ «խուժան» պատանիներս և նույնիսկ շարքային սկաուտները՝ գջլոտված, սոված... Նախանձով և ատելությամբ, որովհետև մենք չունեինք և չէինք էլ ունենա այդպիսի գեղեցիկ հագուստներ:

Այո, դաշնակների սկաուտական կազմակերպությունը դաստիարակեց շատ պատանիների, ավելի շատ, քան ուներ իր շարքերում: Ես դաստիարակություն բառը չեմ վերցնում չակերտների մեջ: Իրոք որ նա մեզ դաստիարակեց ատելությամբ՝ դեպի խտրության, տեր ու ծառայի հին աշխարհը:

2

Պատահո՞ւմ են հրաշքներ կյանքում: Անշուշտ: Այն ամենը, որը տեսնում ես հանկարծակի, անսպասելի՝ առանց ծանոթ լինելու դրա նախապատրաստությանը՝ հրաշք է:

Կարո՞ղ էինք իմանալ մենք՝ 12—13 տարեկան պատանիներ, թե ինչպես էր կոփվում հեղափոխությունը: Մենք միանգամից տեսանք Նոյեմբերյան հեղաշրջումը Հայաստանում, և դա ամենամեծ հրաշքն էր մեր կյանքում: Լավ ապագայի մանկական հավատը, որի անհիմն լինելը ինքներս էլ էինք տեսնում, բայց չէինք ուզում տեսնել, դարձավ ռեալ իրականության վրա խարսխված հավատ:

Հեղափոխությունը կատարվեց մի օրում, բայց մենք, իհարկե, հագնված ու կուշտ չդարձանք մի օրում: Նոյեմբերի 29-ին մենք նույնքան սոված էինք, որքան որ 28-ին: Բայց շուտով վրա հասավ Ռուսաստանի եղբայրական օգնությունը և մարդիկ դադարեցին սովամահ լինելուց, շարունակեցին ապրել, բայց դեռ երկար ժամանակ ապրել սոված: Իսկ մի՞թե նույնը չէր նաև Ռուսաստանում: Ավելցուկնե՞ր էին ուղարկում այնտեղից մեզ, թե՞ իրենց բերանից կտրած հացը…

Իսկ միևնույն ժամանակ, մեր կողքին, քաղաքից մի կիլոմետր այն կողմ գտնվող «Կազաչի Պոստ» նախկին զորանոցներում, հարուստ Ամերիկան հավաքել և պահում էր հայ որբերին: Ճիշտ է, պահում էր ոչ շատ կուշտ, իսկ որ ավելի ճիշտ ասենք՝ կիսաքաղց վիճակում, բայց դա ավելի լավ էր, քան քաղաքի փողոցներում թափառող երեխաների վիճակը: Բացի դա, նրանք ունեին լավ հագուստ՝ սկաուտական համազգեստ... Ես էլ, վերջապես, սովի թելադրանքով, մտա Կազաչի Պոստի որբանոց-սկաուտանոցը: Այնտեղ կային 240 տղաներ: Նրանց մի փոքր մասն աշխատում էր այնտեղի արհեստանոցներում և ամերիկական «օֆիս»-ներում, իսկ մեծամասնությունը պահակություն էր անում Կազաչի պոստի շուրջը, որպեսզի խորհրդային քաղաքը չմտներ այնտեղ և Կազաչի Պոստը մնար որպես մի փոքրիկ Ամերիկա՝ իր ամերիկական դրոշով ու հիմնով, իր ամերիկական դաստիարակությամբ ու դաշնակցական ագիտացիայով, իր կրոնի դասերով ու դասակարգային խտրականությամբ և այլն և այլն:

Ես սկաուտ ընդունվեցի Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից մեկ և կես տարի հետո: Բայց դատարկ ժամկետ չէր դա, այլ մի նոր դպրոց, որտեղ ես շատ բան սովորեցի և շատ բան հասկացա:

Ճիշտն ասած, ոչ թե մեկ և կես տարի, այլ երկուսից ավելի: Ես հաշիվն սկսում եմ Մայիսյան անմոռանալի ապստամբությունից: Այնտեղից սկսվեց մեր քաղաքական գիտակցական կյանքը՝ իմ և իմ հասակակիցների: Եվ եթե Կազաչի Պոստի սկաուտանոցում ես սկսեցի ագիտացիա մղել, կազմակերպեցի կոմերիտական բջիջ, սկիզբ դրեցի սկաուտանոցը ներսից քայքայելուն, ապա այդ բոլորը՝ շնորհիվ նրա, որ ես վազ եմ տվել մայիսյան կարմիր դրոշակի ետևից, իմ աչքերով տեսել եմ «Վարդան զորավար» զրահագնացքը և մինչև իսկ ձեռք եմ տվել դրա մետաղին, և, որ ամենագլխավորն է, լսել եմ բոլշևիկ հերոսներին, տեսել եմ Մուսաելյանին և մյուսներին:

Ուղիղ քառասուն տարի է, որ ես պահում եմ իմ «սկաուտատետրի», այսինքն սկաուտական անդամատոմսի առաջին թերթիկները: Դրանց վրա գրված են իմ անուն-ազգանունը և գրված է իմ համարը՝ 89: Այսօր ինձ էլ է թվում, թե դա գալիս է գրքից: Բայց իրականում գիրքն է գալիս դրանից:

Պահում եմ նաև մի լուսանկար՝ կարճ շալվարով, բայց ոչ սկաուտական տարազով: Դա ես լուսանկարվել եմ սկաուտանոցից դուրս գալուց կարճ ժամանակ հետո: Բայց հենց այդ հագուստն էր իմ հագին, երբ Կազաչի Պոստում եղած ժամանակ իմ տարած կոմերիտական աշխատանքի համար ինձ մի ամսով զրկեցին սկաուտական համազգեստ կրելու «պատվից» և տվեցին այդ «խուժանական» հագուստը:

Կազաչի Պոստի սկաուտանոցի կյանքի մասին ես գրել եմ «Սկաուտ N 89» և ապա նաև, դրա վերամշակված վարիանտ «Կարմիր և կապույտ փողկապներ» վեպերը: Ուստի և հարկ չկա կրկնել դրանց բովանդակությունը: Միայն հիշեցնեմ նորից, որ այդ վեպերում ես ինձանից չեմ հնարել համարյա ոչինչ, այն բոլորը, ինչ նկարագրված է այնտեղ, ճիշտ է փաստական կերպով:

Իհարկե, որպես գեղարվեստական երկերի, իմ վեպերի մեջ կան ընդհանրացումներ, կան նաև «հնարովի» մոմենտներ, բայց վերջիններս, ինչպես ասացի, բռնում են շատ փոքր տեղ: Կոմերիտական բջիջ, «քայքայող» եռյակ, ժողովներ, գողություն պահեստում, ամեն շաբաթ օրը շքերթ՝ ամերիկացիների տան մոտով, ամերիկյան դրոշակներով, որբուհիների լլկում ամերիկացիների կողմից, արի շան թաղումը, գորտով ձվածեղ, ֆուտբոլ չիմացողների մրցություն և այլն և այլն — այդ բոլորն իրական դեպքեր են: Բայց շատ ավելի հեշտ կլինի թվարկել այն, ինչ ես եմ հնարել, քան այն, ինչ վերցրել եմ իրականությունից:

Սկաուտապետ Վահան Չերազին ես դուրս եմ բերել Քիրազ ազգանունով: Իրականություն է նաև նրա հետ կապված ամեն ինչը:

Ես ավելորդ կերպով վեպի սյուժեն չծանրաբեռնելու համար դուրս չեմ բերել Չերազի օգնական Պետրոսին, որին մենք, իհարկե, «Պարոն Պետրոս» էինք կոչում:

Չերազն ու Պետրոսը, երկուսն էլ լինելով դաշնակցականներ, հակոտնյաներ էին իրենց մարդկային էությամբ: Չերազը ֆանատիկորեն իր գաղափարին նվիրված մարդ էր և ուներ բազմաթիվ դրական հատկանիշներ. նա անկաշառ էր, իր կենցաղի մեջ համեստ, մաքուր և այլն: Պետրոսը, ընդհակառակը, չուներ գաղափարական որևէ նշույլ անգամ, գոփող էր ու կնամոլ և ընդհանրապես ոտից գլուխ բացասական տիպ:

Իհարկե, այդ ամենի հետևանքով, իր մարդկային արժանիքներով, բայց դաշնակցական անհաշտ գաղափարախոսությամբ, Չերազը դառնում էր շատ ավելի վտանգավոր, որովհետև վայելում էր

պատանիների հարգանքը, վերջիններս հեշտությամբ էին ընկնում նրա ազդեցության տակ: Պետրոսը բոլորին վանում էր իրենից:

Արդեն մեկ և կես տարի խորհրդային Ալեքպոլում ապրած պատանուս Կազաչի պոստն ապշեցրեց առաջին իսկ օրվանից: Թվում էր, թե դա Ամերիկայի մի կտոր է՝ խորհրդային երկրում ընկած և այդ երկրից կղզիացած:

Կազաչի Պոստի վրա ծածանվում էին ամերիկական դրոշակներ, միայն ամերիկական: Դպրոցներում անցնում էին կրոն, այն էլ՝ բողոքական միսիոներների կողմից, միայն ամերիկական բողոքական կրոն, Ամերիկայում տպագրված «Հոգևոր երգեր» ժողովածու-դասագրքով: Օտար լեզուներից դասավանդվում էր միայն ամերիկացիների լեզուն՝ անգլերենը: Ռուսերենի մասին, իհարկե, խոսք անգամ չկար:

Խստիվ արգելված էր թերթերի մուտքը Կազաչի Պոստ: Բայց դա վերաբերում էր միայն խորհրդային թերթերին: Արտասահմանից ստացվածները կարող էինք կարդալ: Օրը ցերեկով տարվում էր դաշնակցական ագիտացիա մեր դպրոցների դաշնակ ուսուցիչների և որբանոցների դաշնակ կառավարիչների կողմից: Իսկ երբ Կազաչի Պոստում տեղի ունեցավ սկաուտների համահայաստանյան օլիմպիադա, Երևանի սկաուտները Կազաչի Պոստի սահմանից ներս մտան դաշնակցական հիմնը նվագելով իրենց փողային նվագախմբով:

Այդ պարագաներում տանել կոմերիտական աշխատանք՝ կնշանակեր ենթարկվել անմիջապես վտարվելու և քաղաքի փողոցներում սոված թափառելու վտանգին: Բայց կարո՞ղ էի արդյոք ես, կրակոտ պատանի, մայիսյան ապստամբության ժամանակից ի վեր միտինգից միտինգ վազվզած և արդեն բավական գիտակցության եկած, հանդուրժել տիրող վիճակը: Ես ձեռնարկեցի կոմերիտական բջիջ ստեղծելուն, որի ամբողջ պատմությունն իրականորեն արված է իմ վեպերում:

Այդ ժամանակ կոմերիտմիության գավկոմի քարտուղարը Հրանտ Եկավյանն էր, մի շատ համակրելի և հմայիչ երիտասարդ, որի մոտ և, ես գնում էի հաճախ, տանելով մեր արձանագրությունները և բանավոր տեղեկություններ:

Մեր բջիջին հաջողվեց ծավալել իր աշխատանքը և սկաուտանոցի գոյության վերջին շրջանում գործել մինչև իսկ լեգալ:

Այն ժամանակներում կոմերիտմիության մեջ մտնելու համար գոյություն ուներ նախնական թեկնածուական ստաժ: Ես, Կազաչի Պոստի դժվարին պայմաններում աշխատած լինելու համար, որպես կոմերիտական բջիջի քարտուղարը, կոմերիտմիության մեջ ընդունվել էի առանց թեկնածուական ստաժի:

Սկաուտանոցները վերացան, ամերիկացիները վերադարձան իրենց երկիրը՝ աշխարհի մյուս երեսում: Բազմահազար որբերի խնամակալությունն իր վրա վերցրեց խորհրդային իշխանությունը:

1923 թվի փետրվարի 2-ին ես ընդմիշտ հրաժեշտ տվեցի Կազաչի Պոստին և վերադարձա խորհրդային Ալեքպոլ:

Այժմ, երբ ես դուրս էի եկել սկուատանոցից, որն ապրում էր իր լուծարքի շրջանը, կոմերիտմիության կոմիտեն ինձ ուղարկեց աշխատելու պիոներական կազմակերպության մեջ:

Ինձ նշանակեցին Ալեքպոլի գավառի առաջին գավառամասի պատկոմական կազմակերպության շտաբի պետ, իսկ ավելի հասարակ բառով ասած՝ հրահանգիչ:

Առաջին գավառամասն ուներ 23 գյուղ: Այդ բոլոր գյուղերում ես պետք է ստեղծեի պիոներական կազմակերպություններ, իսկ այնուհետև հաճախակի կատարեի հրահանգչական այցելություններ: Այդ բոլոր գյուղերը գնալու համար որպես տրանսպորտ իմ տրամադրության տակ կային... իմ զույգ ոտքերը:

Բնական է, որ ես չէի կարողանում իրագործել այդ բանը: Կազմակերպություններ ստեղծվեցին միայն չորս գյուղերում, այդ թվում՝ գավառամասի կենտրոն Ախուրյան գյուղում, որն այն ժամանակ կոչվում էր Դյուզքյանդ, ինչպես նաև Կառնուտ, Կամո և Ազատան գյուղերում, որոնք այն ժամանակ, համապատասխանորեն, կրում էին անճոռնի անուններ՝ Դիրաքլար, Հաջի-Նազար, Խլի Ղարաքիլիսա... Վերջին գյուղի պատկոմական կազմակերպության մեջ աշխատում էր սկաուտանոցի կոմերիտական բջջի մի ուրիշ անդամ, այսպես ասած՝ իմ «օգնականը»:

Այդ շրջանում կատարած աշխատանքների մասին մամուլում, քաղաքային «Բանվոր» թերթում, մնացել է հետևյալ թղթակցությունը՝ «Առաջին գավմասում» վերնագրով և «առաջին գավմասի շտաբի պետ Մկրտիչ Արմեն» ստորագրությամբ.

«**Կազմակերպչական**.— առաջին գավմասում պատկազմակերպության հիմքը դրվել է սույն թվի հուլիսի 7-ից: Սկզբում պատկոմների թիվը հասնում էր 32-ի:

Այժմ դաշտային աշխատանքների վերջացման և գյուղ-դպրոցների բացման հետևանքով հնարավոր եղավ աշխատանքները կանոնավորել:

Այժմ կազմակերպությունն ունի 60 անդամներ:

Երկրորդ հերթին կազմակերպվեց Հաջի-Նազարը՝ սեպտեմբերին, որն այժմ ունի 40 անդամներ:

Այդ երկու գյուղերից հետո հոկտեմբերին կազմակերպվեց Ղարաքիլիսան, որն ունի 80 պատկոմ:

Կուլտ. կրթ. աշխատանք.— Գավմասում կուլտուր-կրթական աշխատանքները տարվել են սկզբից մինչև հիմա բավարար: Ավելի ուժեղ աշխատանքներ այդ ասպարեզում չի էլ կարելի, քանի որ պատկոմների մեջ միայն առաջին և երկրորդ բաժանմունքի աշակերտներ կան:

Վերոհիշյալ երեք գյուղերում էլ ունենք նոր կազմակերպված սեկցիաներ՝ գրական, թատերական և երգեցիկ:

Դյուզքյանդը հուլիսին հրատարակեց իր օրգանը՝ «Միշտ պատրաստ» անունով: Ուժերի պակասության պատճառով երեք համարից հետո դադարեց: Այժմ Ղարաքիլիսան հրատարակում է իր պատի լրագիրը՝ «Ղարաքիլիսայի պատկոմ» անունով:

Ֆիզ. կրթ. աշխատանք.— Ֆիզիկական աշխատանքը գավմասում շատ ուժեղ է տարվում: Պատկոմներն անցել են շարքային, ռիթմիկ և ատլետիկ մարզանքներ: Անցածները յուրացրել են լավ կերպով և շարունակում են այդ դրությամբ աշխատել»:

Գյուղի պատանեկության մեջ տարվող աշխատանքի դժվարությունների մասին ես գրել էի նույն «Բանվոր»-ում, «Պատկազմի դերը գյուղերում» փոքրիկ հոդվածի մեջ:

Ինչպես հայտնի է, պատկոմական կազմակերպությունները, մի կողմից ենթարկվելով կոմերիտական գավկոմներին, մյուս կողմից ենթարկվում էին տեղական լուսբաժիններին:

Այդ տարիներին Ալեքպոլի լուսբաժնի վարիչը Վահան Աբրահամյանն էր: Բարձրահասակ, խստադեմ, նիհարկոտ, նա իր հոգու խորքում բարի և շատ լավ մարդ էր, սիրում էր պատկոմներին և պատկոմներն էլ նրան:

Լինելով հին բոլշևիկ, նախահեղափոխական շրջանում կրելով դրանից բխող բոլոր դժվարություններն ու տանջանքները, նա դարձել էր ջղային: Դա արտահայտվում էր նրա երբեմնակի բռնկումները, որոնց համար նա շուտով ինքն էլ էր զղջում և, որպես ազնիվ մարդ, աշխատում էր գոհացում տալ տուժած մարդկանց՝ եթե կային այդպիսիք:

Հիշում եմ այսպիսի մի դեպք:

1921 թիվն էր, ես դեռ չէի մտել սկաուտանոց: Քաղաքային գրադարանը շարունակ ստանում էր նորանոր գրքերի հակեր՝ զանազան տեղերից: Գրքերը հարկավոր էր մշակել, ցուցադրել, դնել իրենց տեղերը:

Ես, առանց աշխատավարձ ստանալու, կամավորաբար, աշխատում էի գրադարանում՝ միայն նրա համար, որ մոտիկ լինեի գրքերին, շոշափեի դրանք, թերթեի, կարդայի: Ես սոված էի, բայց ուրախ: Եվ եթե կար մի բան, որի համար տխրում, ավելի շուտ հուսահատվում էի, դա այն էր, որ ես չէի կարողանում կարդալ այդ բոլոր գրքերը միանգամից և հազիվ թե կարողանայի կարդալ իրար ետևից:

Գրադարանի հաստիքային աշխատակիցները, ինչպես և բոլոր ուրիշները, աշխատավարձն ստանում էին ոչ թե դրամով, այլ մթերքներով՝ հաց, սելյոդկա, ցորեն և նման բաներ:

Գրադարանում, դարակներ սարքելու համար, աշխատում էր մի շատ լավ հյուսն երիտասարդ՝ Շավարշ անունով: Նա խուլ էր և արտասովոր ուժի տեր:

Մի օր, երբ նա լինում է Վահան Աբրահամյանի մոտ, վերջինս տալիս է նրան իր մթերային կտրոնները և խնդրում է ստանալ իր մթերքները և տանել իրենց տուն՝ բացի ցորենից, որը կարող է պահել իրեն.— «աղանձ կանեք գրադարանի տղաների հետ, կուտեք»:

Շավարշը, որը մարդկանց խոսքերն ըմբռնում էր ըստ նրանց բերանների շարժումների, դժբախտաբար, չի հասկանում լուսբաժնի վարիչի ասածները և ամբողջ մթերքը, ներառյալ նաև ցորենը, տանում է նրանց տուն: Գուցե և հասկանում է, բայց չի ուզում զրկել «ընկեր Աբրահամյանին», վերցնել:

Հաջորդ օրը երբ ես ինչ-որ գործով լուսբաժնում էի, Աբրահամյանը համառոտ պատվիրեց ինձ. «Կասես այդ Շավարշին, որ նա ապուշ է»:

Վերադառնալով գրադարան, ես, իհարկե, ոչինչ չասացի Շավարշին: Ամեն ինչից բացի, ես գիտեի Շավարշի արտակարգ ֆիզիկական ուժը և նրա ջղայնության շատ սակավադեպ, բայց բուռն մոմենտները: Նա պարզապես կարող էր մի հարվածով տափակացնել ինձ որպես որևէ ոչ հաստ գիրք և ես հանգիստ կարող էի տեղավորվել դարակներից մեկում:

Դրա հետևյալ օրը գրադարանի դուռը բացվեց և ներս մտավ Վահան Աբրահամյանը:

— Այստե՞ղ է Շավարշը,— հարցրեց նա:

— Ոչ,— պատասխանեցի ես:

— Հաղորդեցեք Շավարշին, որ ես ներողություն եմ խնդրում նրանից:

Եվ վերադարձավ լուսաբաժին:

Ես, իհարկե, չփորձեցի «ուրախացնել» նրան, որ ոչինչ չեմ ասել Շավարշին: Այս անգամ Աբրահամյանն ինքը կվերածեր ինձ մի բարակ բրոշյուրի:

Ահա այդ Աբրահամյանն էր աշխատում որպես լուսաբաժնի վարիչ, երբ ես, սկաուտանոցից դուրս գալուց հետո, աշխատում էի պատկոմական կազմակերպության մեջ:

1923 թվի երկրորդ կեսին Ալեքպոլի կազմակերպությունը պատրաստվում էր գնալ սեպտեմբերին Երևան՝ պատկոմների համահայաստանյան առաջին հավաքին: Պետք է գնայի նաև ես: Սակայն դա ձախողվեց, և ձախողվեց այն կերպ, որ ես չէի կարող անսահման չուրախանալ դրա համար:

Դեպքը պատահեց այսպես:

Ես սկսնակ գրող էի, 1923 թվի հուլիսի 17-ին Ալեքպոլի «Բանվոր» թերթում տպագրվել էր իմ առաջին բանաստեղծությունը և այնուհետև տպագրվել էին էլի մի քանիսը: Եվ ահա, սեպտեմբերի 3-ին թե 4-ին, թերթի խմբագիրը հանդիպեց ինձ փողոցում և առանց զգուշանալու, որ ես կարող եմ խենթանալ ուրախությունից, ասաց շիփշիտակ.

— Պատրաստվիր, այսօր գնում ես Մոսկվա:

Ես ճոճվեցի ոտքի վրա: Խմբագիրը հարցրեց.

— Փող ունե՞ս:

— Ոչ:

— Ոչինչ: Եկ իսկույն ստացիր հոնորարդ: Դուրս կգրեմ նաև ավանս: Ռոճիկ ստացե՞լ ես:

— Ոչ: Արդեն վեց ամիս:

— Գնա ասա, թող տան: Գոնե երեք ամսվա համար: Ասա, որ գնում ես Մոսկվա:

Ալեքպոլի գավառի պատկոմական կազմակերպության շտաբի պետն այն ժամանակ Հարություն Գառգալոյանն էր: Նա հենց նոր էր ստացել դրամ՝ պատկոմներին համահայաստանյան հավաքի տանելու համար:

Ես հայտնեցի իմ խնդիրը:

— Չեմ կարող,— մերժեց նա,— կգնաս Մոսկվա, կգաս, կստանաս:

Մենք մտերիմ էինք իրար հետ, բայց այդտեղ ստիպվեցինք վիճել, և ես սպառնացի, որ կգնամ լուսաբաժնի վարիչի մոտ:

— Մեկ է, չեմ տա,— խոստացավ Հարությունը:

Ես գնացի:

Վահան Աբրահամյանն ինձ ընդունեց շատ սիրալիր, ժպիտով, աթոռ առաջարկեց: Ես դեռ չէի սկսել իմ ասելիքը, երբ նրա կաբինետի դուռը կիսաբաց եղավ, ներս նայեց պրտկերեսի տպավորություն թողնող մի մարդ: Ըստ երևույթին նա շատ էր տարել Աբրահամյանի զահլան, որովհետև նա իսկույն

վեր կացավ, ժպիտով ասաց ինձ՝ «ներիր մի րոպե», մոտեցավ այդ մարդուն, մեջքը շուռ տվեց դեպի իրեն, միջակ ուժի մի հարված հասցրեց ոտքով նրա քամակին և շպրտեց միջանցք:

Վերադառնալով իր տեղը, նա նորից սիրալիր ժպիտով դիմեց ինձ.

— Ես քեզ լսում եմ:

Ես գունատվեցի: Հաղորդել Գառգալոյանի մերժումը՝ կնշանակեր զայրացնել Աբրահամյանին: Եվ քանի որ Հարությունը չկար, իսկ ձեռքի տակ գտնվողը ես էի, նա կարող էր ինձ վրա թափել իր բարկությունը: Բայց, ի՞նչ արած, ես հո չէի՞ կարող հրաժարվել Մոսկվա գնալուց…

Ես հաղորդեցի:

Հակառակ իմ սպասածի, Աբրահամյանը չբարկացավ, այլ ասաց միանգամայն հանգիստ, նույնիսկ ժպիտով:

— Հաղորդիր այդ Գառգալոյանին, որ եթե չվճարի քո ամբողջ ռոճիկը՝ Ալեքպոլի պատկոմական կազմակերպությունը չի գնա Երևան: Կվերադառնաս ինձ մոտ և արդյունքների մասին կասես:

Ես վեր կացա: Որքան էլ տարբեր մարդիկ էին Վահան Աբրահամյանը, հյուսն Շավարշն ու Հարություն Գառգալոյանը, բայց մի ընդհանուր բան կար նրանց մեջ: Երեքն էլ շատ լավ մարդիկ էին՝ խաղաղ, բարի, ես կասեի՝ հմայիչ, բայց երեքն էլ ունեին նույն թերությունը՝ բարկության հանկարծակի, թեկուզ և սակավադեպ բռնկումներ, որոնց ժամանակ կարևոր չէր, թե ում վրա էր թափվում հերսը, միայն թե թափվեր:

Գառգալոյանի մոտ գնալիս ես մտածում էի, որ հարկավոր է համենայն դեպս, լուսբաժնի վարիչի կարգադրությունը նրան հաղորդել պատշաճ հեռավորության վրայից և մոտենալ սեղանին միայն այն ժամանակ, երբ հարկավոր կլինի ստորագրել ռոճկացուցակի մեջ:

Բայց կատարվեց բոլորովին այլ բան, խիստ ապշեցուցիչ: Հարություն Գառգալոյանը բոլորովին էլ չբարկացավ, որովհետև ինքն էլ էր շատ հարգում Աբրահամյանին ու լսում նրան, այլ ասաց շատ հանգիստ.

— Գնա ասա, որ ոչ մի միլիոն չեմ տա:

Չմոռանամ ասել, որ այն ժամանակ մենք ստանում էինք համարյա միլիարդներ և «ոչ մի միլիոն չեմ տա»՝ դա նշանակում էր՝ «ոչ մի կոպեկ»:

Ես հիշեցի, որ Աբրահամյանը կարգադրել էր ինձ՝ վերադառնալ և հաղորդել «արդյունքի» մասին…

Ես հիշեցի նաև անկոչ հյուրի ստացած քացին ու հուղարկավորի քայլերով դիմեցի լուսբաժին: Բայց ես իմ մասին մտածելուց ավելի շատ մտածում էի Ալեքպոլի պատկոմական կազմակերպության մասին: Խեղճ կազմակերպություն... Երևանում կսկսվի պատկոմների համահայաստանյան հավաքը, իսկ մերոնք չկան: «Ի՞նչ է պատահել, ինչո՞ւ չեկան Հայաստանի երկրորդ քաղաքի և դրա գավառի պատկոմները»... «Արմենին ռոճիկ չեն տվել և դրա համար կազմակերպությունը պատժվել է»…

Վահան Աբրահամյանը կանգնած էր փողոցում, շենքի շքամուտքի բարձր աստիճանների վրա, արվեստագետ Գարեգին Լևոնյանի հետ: Ես սրտապնդվեցի: Մոտենալով, հաղորդեցի Գառգալոյանի մերժումը:

Ըստ երևույթին այդ օրը բոլորը որոշել էին ապշեցնել ինձ։

— Եթե մերժում է՝ ի՞նչ կարող եմ անել,— խեղճ-խեղճ «ասաց Աբրահամյանը։— Գուցե մի ուրիշ տեղից դրամ ճարես, հը՞…

Իմ ստացած խիստ համեստ հոնորարով ու ավանսով ես գնացի Մոսկվա ու վերադարձա։ Ճանապարհը մինչև Մոսկվա տևեց տասներեք օր և վերադարձը նույնպես։ Իսկ Մոսկվայում ես մնացի ընդամենը չորս օր…

Դա ուրիշ թեմա է, բայց պետք է բացատրեմ համառոտակի։ Մոսկվայում բացվել էր Գյուղատնտեսական և տնայնա-արհեստագործական առաջին ցուցահանդեսը, որը տեսնելու համար էքսկուրսիաներ էին գնում Սովետական Միության բոլոր կողմերից։ Հայաստանից գնացող խումբը, որի մեջ էի նաև ես, ոչ միայն ինքն էր գնում, այլև, նույն գնացքով, մասամբ մարդատար և մասամբ ապրանքատար, տանում էր նոր էքսպոնատներ մեր պավիլիոնի համար։

Մեր գնացքի համար արհամարհելի մանրուք էր բոպեների հասկացողությունը։ Փոքր կայարաններում նա կանգ էր առնում ժամերով, իսկ քիչ թե շատ մեծերում՝ կեսական կամ մեկական օրով։ Այնպես որ, մենք հնարավորություն ունեցանք լողանալ Կասպից ծովում, մանրամասն ուսումնասիրել Ռոստով քաղաքը և այլն և այլն։

Վերադառնալով Մոսկվայից, ես շարունակեցի աշխատել պատկոմական կազմակերպության մեջ։

Ռոճիկը ստացա շատ շուտով, ընդամենը մի քանի ամիս անց։ Կարծեմ էլի վեց։

1924 թվին Ալեքպոլի պատկոմական կազմակերպության շտաբի պետ նշանակվեց Խլղաթ Գաբրիելյան անունով մի երիտասարդ։ Շատ շուտով նա ցանկություն հայտնեց ինձ հետ միասին գնալ գավառամասի գյուղերը և ծանոթանալ իմ կատարած աշխատանքների հետ։

Իհարկե, մենք ամենից առաջ գնացինք Դյուզքյանդ։ Տեսնելով, որ մինչև իսկ գավառամասի կենտրոնի պատկոմական կազմակերպությունը չի գտնվում բավարար վիճակի մեջ, Խլղաթը հասկացավ, որ մյուս գյուղերում, անշուշտ, դրությունն ավելի վատ է։

Ես հաստատեցի նրա ենթադրությունը։ Նա խիստ զարմացավ։ Բայց զարմանալիս նա մոռացավ, որ Ալեքպոլից մինչև Դյուզքյանդ ձգված մի քանի կիլոմետր ճանապարհը միասին անցնելիս նա նստած էր ձիու վրա, իսկ ես վազ էի տալիս նրա կողքով…

Իսկ 23 գյուղերի հեռավորությունները քաղաքից և իրարից կազմում էին հարյուրավոր կիլոմետրեր…

Առաջին գավառամասում «լավ աշխատած չլինելու» համար Խլղաթ Գաբրիելյանը վերցրեց ինձ այնտեղից և... առաջ քաշեց աշխատելու պիոներական կազմակերպության քաղ-գավ շտաբում։

Այսօր պիոներական կազմակերպությունը, իհարկե, պատանիների մեջ տանում է շատ ավելի խորացած աշխատանք, քան թե այն ժամանակ։ Բայց կան պատկոմական մի շարք տրադիցիաներ, որոնք մենք այսօր իզուր մոռացել ենք։ Դրանք շատ կարող էին պետք գալ մեր պատանիների դաստիարակության գործում։

Ճիշտ է, մենք մի քիչ չափազանցնում էինք շարային վարժությունները, մի քիչ ավելի հաճախակի էինք անցնում քաղաքի փողոցներով՝ նվագախմբով, դրոշակներով, համազգեստներ հագած և

վզկապներ կապած, կոլեկտիվների կանոնավոր երթով: Բայց հարկ եղածից մի քիչ պակաս չէ՞ այդ բոլորն այսօր:

Բացի իմ վարած մի շարք կուլտուր-կրթական աշխատանքներից, ես շտաբում ունեի նաև մի հաճելի և հպարտ պարտականություն: Ես Ալեքպոլի, այժմ արդեն Լենինականի, պիոներական կազմակերպության դրոշապահն էի: Հանդիսավոր օրերին, ես բաց էի անում այն սենյակի դուռը, որտեղ պահվում էր կազմակերպության դրոշը: Փողոցում պիոներական կոլեկտիվները լուռ, քարացած, սպասում էին հանդիսավոր պահին: Ես դուրս էի գալիս, իմ ետևից մի պիոներ բերում էր դրոշը: Մեզ միանում էին կոլեկտիվների դրոշակակիրները, և մեր խումբը, նվագի թնդյունի տակ, անցնում էր շարքերի առջևով: Բոլոր պիոներները պատիվ էին տալիս, յուրաքանչյուր կոլեկտիվի մոտ մեր խմբից անջատվում էր կոլեկտիվի դրոշակակիրն իր դրոշով և կանգնում շարքերի առջևում: Կազմակերպության դրոշն անցնում էր շարքերի մի ծայրից մյուսը և կանգնում ամենաառջևում:

Պետք էր նայել պատանիների հուզված դեմքերին: Այդ հանդիսավոր արարողությունը հպարտություն և պատասխանատվություն էր ներշնչում նրանց՝ իրենց պիոներական կոչման համար, այն բանի համար, որ նրանք անդամներ են այդ պատվավոր կոլեկտիվի: Եվ որքան ռոմանտիկա կար դրա մեջ...

Յուրաքանչյուր պատանի ձգտում էր դառնալ պիոներ, բայց դա այնքան էլ հեշտ չէր: Հարկավոր էր արժանի լինել այդ կոչմանը: Իսկ արժանի լինելուց հետո միշտ լինել օրինապահ ու օրինակելի, չենթարկվել ընկերների կամ կոլեկտիվի նկատողությանը, էլ չասած վտարման մասին:

Սակավ չէր պատահում, երբ տեսնում էիր, թե ինչպես փողոցում պիոները մոտենում էր մի ուրիշ պիոների, պատիվ էր տալիս և փսփսում էր ականջին.— «Լավ չես անում, հիշիր, որ դու պիոներ ես»... Եվ մյուսն սթափվում, ընդհատում էր իր որևէ անվայել արարքը:

Լավ է, անշուշտ, որ աշակերտներն ու աշակերտուհիներն ունեն իրենց դպրոցական համազգեստը: Այն ժամանակ դա չկար, համազգեստ ունեին միայն պիոներները: Չպետք է թերագնահատել համազգեստի նշանակությունը: Յուրաքանչյուրը բաղձում էր հագնել այն: Ոչ թե նրա համար, որ դա գեղեցիկ էր — գուցե նա հագնված էր ավելի գեղեցիկ — այլ որ այդ համազգեստը նրան դարձնում էր լենինյան պիոներական կազմակերպության անդամ, լցնում էր նրա հոգին դրա հպարտ գիտակցությամբ:

Այժմ, երբ կա նաև մի այլ համազգեստ, որը նշանակում է՝ «ես աշակերտ եմ», պետք է այնպես անել, որ պիոներական համազգեստը և դրա հետ միասին պիոներական կոչումը պահպանի իր գերազանց վիճակը դրա նկատմամբ: Եվ պատանին, որը ոչ միայն աշակերտ է, այլև պիոներ, այդ երկու համազգեստների վրա նայի ոչ որպես իր գարդերոբի հագուստների, որոնք կարելի է հագնել փոխնեփոխ, նայած տրամադրությանը, այլ միշտ պահպանի իր առավել հարգանքն ու պատասխանատվությունը պիոներական համազգեստի, վզկապի, կրծքանշանի, պիոներական կոչման վերաբերյալ:

3

Դա պատահաբար էր այդպես ստացվել, ուրիշ շենք չլինելու պատճառով, բայց որքան սիմվոլիկ է, որ Լենինականի պիոներական շտաբը տեղավորված էր մի եկեղեցում, այժմյան Աբովյան փողոցի վերին մասում:

Եկեղեցին ինքը փակ էր: «Գործում» էին դրա միայն մի քանի խցերը, որոնցից մեկում ապրում էր շտաբի պետ Խլղաթը:

Հավատացյալ ծերունիներն ու պառավները չէ, որ ամեն օր գալիս էին այնտեղ: Եկեղեցու բավական ընդարձակ գավթում թնդում էր, պիոներների աղմուկը, ծիծաղը: Մարզանք, շարային վարժություններ, խաղեր..

Խլղաթ Գաբրիելյանը, մշեցի, ուներ մի քանի տարօրինակություններ: Ամենից առաջ, նա սիրում էր բոբիկ ման գալ: Այդ սովորությունը երևի մնացել էր Մշո իրենց գյուղից, որտեղ նա, մանուկ հասակում, վազվզում էր իր սար ու ձորերը:

Առավոտները կամ օրվա ուրիշ ժամերին, եկեղեցու գավթում զբաղված որևէ կոլեկտիվի հրահանգիչը հանկարծ նկատում էր եկեղեցուց դուրս ելնող Խլղաթին: Դառնալով շարք կանգնած կոլեկտիվին, նա հրահանգում էր՝ «զգա՛ստ»:

Մոտենում էր Խլղաթը՝ վերնաշապկի օձիքն արձակած, գլխաբաց: Բայց եթե նույնիսկ նա վզկապով էր լինում ու պիոներական գլխարկով, միևնույնն է, ոտաբոբիկ էր: Շտաբի պետը ոտաբոբիկ մոտենում էր կոլեկտիվին և բացականչում՝ «պիոներնե՛ր, պատրա՛ստ»: Եվ կոլեկտիվը թնդում էր՝ «միշտ պատրաստ»:

Խլղաթը գնում էր իր գործին:

Շտաբի պետն ուներ իր օգնականները.— «ֆիզկուլտ» գծով և «կուլտկրթ» գծով: Առաջինը մի բարձրահասակ, նիհար, սպիտակադեմ ինտելիգենտ երիտասարդ էր՝ միշտ կոկիկ հագնված, անուն-ազգանունը՝ Պարույր Հարությունյան: Երկրորդը մի գեր աղջիկ էր, որը, կամ իրոք, տարիքոտ էր, կամ այդպիսի տպավորություն էր թողնում իր պատկառելիության հետևանքով: Նրա ազգանունը Սահրատյան էր, բայց, չգիտեմ ինչու, բոլորը նրան Սագրադյան էին ասում, ռուսական ձևով: Նա պենսնե էր կրում, կուլտուրական և լուրջ աղջիկ էր, թեև երբեք չէր խուսափում ծիծաղելուց և կատակելուց: Պիոներները ոչ միայն հարգում, այլև շատ էին սիրում նրան:

Սահրատյանը կուլտուրական մարդու ներողամիտ ժպիտով էր նայում ոտաբոբիկ Խլղաթին և կարծեմ մի քիչ էլ սիրահարված էր վրան:

Մենք՝ հրահանգիչներս, որ նաև շտաբի անդամներ էինք, ամեն ազատ րոպեին հավաքվում էինք եկեղեցու սենյակներից մեկում: Եթե խորհրդակցություն չկար, ապա հավաքվում էինք պարզապես իրար տեսնելու, խոսակցելու և կատակներ անելու:

Պիոներներից շատերին ես այժմ մոռացել եմ, բայց հրահանգիչներին, համարյա բոլորին, հիշում և մասամբ էլ տեսնում եմ մինչև հիմա: Նրանք դուրս եկան պիտանի և արժեքավոր մարդիկ: Մեկը՝ ակադեմիկոս, մյուսը՝ ճարտարապետ, երեքը՝ կուսակցական և կառավարական ղեկավար աշխատողներ, մի քանիսը՝ մանկավարժներ և այլն:

Իմ տրամադրության տակ էր գրադարան-ընթերցարանը, որին ես ցույց էի տալիս «ընդհանուր ղեկավարություն», բայց չէի հերթապահում այնտեղ: Ես ղեկավարում էի գրական խմբակը, բաց էի թողնում խմորատիպ շաբաթաթերթը, խմբագրում էի պատի ձեռագիր լրագիրը և այլն, մի խոսքով, տանում էի կուլտուրական աշխատանք: Իհարկե, սկաուտանոցում շարային վարժությունների սովորած, ես կարոտում էի աշխատանքի այդ տեսակին, որով զբաղվել էի միայն գյուղերի պիոներական կոլեկտիվներում: Բայց կուլտուրական և մանավանդ գրական աշխատանքն ինձ

կլանում էր ավելի ու ավելի: Ես ոչ միայն ինքս էի գրում և տպագրում բանաստեղծություններ, այլև աշխատում էի պիոներների միջից առաջ քաշել պատանի բանաստեղծների:

1924 թվի ամռանը Լենինականում կայանալու էր պիոներների համահայաստանյան երկրորդ հավաքը՝ Համրմաթը: Այդ տարօրինակ բառը կազմված էր հետևյալ բառերից. «Համահայաստանյան մրցություններ՝ մարմնամարզության, արտասանությունների, թատրոնի»:

Լենինականի պիոներական կազմակերպությունը պատրաստվում էր արժանավայել ընդունել իր բազմաթիվ հյուրերին և պատվով դուրս գալ նրանց առաջ: Շտաբի ղեկավարները, հրահանգիչները, պիոներական ակտիվը մտածում էին և գտնում մարմնամարզական նորանոր, գեղեցիկ վարժություններ, հնարում էին նորանոր կոլեկտիվ պարեր, ինչպես, օրինակ, «Կժերով պարը» և այլն և այլն:

Մի հետաքրքիր մտահղացում ունեցա նաև ես:

Այդ տարիներին Ռուսաստանում, այնուհետև նաև այլ հանրապետություններում պրոպագանդվում էր թատրոնական արվեստի մի նոր, մասսայական ձև, այսպես կոչված՝ «հրապարակային ներկայացում»: Այդպիսի ներկայացման համար բեմ հանդիսանում էին քաղաքի փողոցները, դերակատարները՝ մասսաները, և հանդիսականները՝ նույնպես մասսաները:

Դեռևս իմ Կազաչի Պոստում եղած ժամանակ այդ ձևով բեմադրվեց Արշակ Աթայանի «Սասունցի Դավիթ» պիեսը: Ռեժիսյորն էր նշանավոր Արմեն Արմենյանը: Դերակատարները՝ հարյուրավոր սկաուտներ և որբուհիներ: Ի միջի այլոց, ասած, հուշարարը ես էի: Եվ քանի որ փորձերը գնում էին մի քանի ամիս շարունակ, հուշարար բառն ինձ կպավ որպես անուն և շատերը, մոռանալով իմ իսկական անունը, ինձ անվանում էին Հուշարար:

Ներկայացումը տեղի ունեցավ Կազաչի Պոստի մոտերքում: Այնտեղ կար մի ձորակ, որի մի թեք լանջը հիանալիորեն հարմար էր՝ հանդիսականների նստոտելու համար: Ներկա էինք քաղաքից եկած ավելի քան տասնհինգ հազար մարդ:

Ներկայացումը տեղի էր ունենում ձորակում, դրա մյուս լանջին և մասամբ էլ ձորի վերևի դաշտում: Այն պահին, երբ Սասունցի Դավիթը պետք է բերեր ոչխարների հոտը՝ հետն առյուծներ ու վագրեր խառնած, իրոք որ, նա բերեց ոչխարների մի մեծ հոտ: Առյուծներ և վագրեր Լենինականի շրջակայքում գտնել չկարողացանք:

Բնական է, որ այդպիսի մեծ «բեմի» հուշարարը պետք է ունենար ոչ այնքան ուժեղ ձայն, որքան որ ուժեղ ոտքեր՝ դեսուդեն վազվզելու համար: Եվ քանի որ դա չէր կարելի անել սկաուտական համազգեստ հագած — որքան գիտեմ Սասունցի Դավթի ժամանակ սկաուտներ չկային — ուստի և ես նույնպես հագել էի սասունցու հագուստ և խառնվել էի դերակատարներին: Միայն թե, իմ ձեռքում պինդ բռնել էի պիեսի տեքստը, որպեսզի ձորն ի վեր մագլցելիս տուրուդմբոցի կենտրոնում գտնվելիս չկորցնեմ և փչացնեմ տասնվեց հազար մարդու գործը:

Ներկայացումն ունեցավ մեծ հաջողություն:

1924 թվի հունվարի 9-ին քաղաքի փողոցներում տեղի ունեցավ մի ուրիշ հրապարակային ներկայացում, որին, որպես դերակատարներ, մասնակցում էին երկու հազար մարդ: Ես այդ մասին գրել եմ նույն «Բանվոր» թերթում: Ներկայացման բովանդակությունը մոռացել եմ: Պիտի ենթադրել, որ Լենայի դեպքերի մասին էր, թեև, իմ հոդվածում, երևի շփոթելով, գրել եմ, որ դա նվիրված էր 1905 թվի տասնիններորդ տարեդարձին:

Ինչ էլ լինի, որոշակի էր մի բան. ես ջերմ կողմնակից էի հրապարակային ներկայացումների:

Եվ ահա, Համրմաթին նախապատրաստվելու այդ շրջանում, ես միտք հղացա «բեմադրել» Փարիզյան կոմունայի մասին մի պիես՝ իմ սցենարով: Ներկայացմանը, որպես դերակատար, մասնակցելու էր... Լենինականի ամբողջ պիոներական կազմակերպությունը:

Շտաբը պաշտոնապես հավանություն տվեց իմ ծրագրին, հաստատեց այն, և ես անցա փորձերին:

Ամեն առավոտ քաղաքի զանազան կողմերից եկեղեցու գավիթ էին գալիս պիոներական կոլեկտիվները: Ես նրանց բաժանել էի կոմունարների, Թիերի զորքերի, պրուսակների: Քաղաքի այդ մասի մի շարք փողոցները մեր բեմն էին: Պիոներները հարձակվում էին իրար վրա, կոտորում էին իրար, ապա, թե՛ կոտորողները և թե՛ կոտորվածները հարցական նայում էին ինձ, թե էլ ի՞նչ անեն:

Ճիշտն ասած, ես ինքս էլ չգիտեի, թե ուրիշ ինչ պիտի անեն նրանք: Արդեն կատարվել էին մի շարք փորձեր, բայց պատանիները դեռ չէին էլ սովորել մարդավարի կոտորել իրար: Մոլորվել էի նաև ես՝ ռեժիսյորս: Ես չգիտեի, թե որն է ուրեմն «դահլիճը»՝ եթե այդ փողոցները բեմն էին: Որտեղի՞ց էին նայելու մարդիկ, որ տեսնեին ամբողջ ներկայացումը: Թե՞ նրանցից յուրաքանչյուրը տեսնելու էր մի մասը միայն, ինչ կատարվելու էր տվյալ փողոցում կամ հրապարակում: Այդ հարցը, կարծեմ, լուծել չկարողացան նաև ինձանից շատ ավելի փորձառու ռեժիսյորներ, և «հրապարակային ներկայացումների» ձևը շուտով դադարեց գոյություն ունենալուց:

Բայց նույնիսկ դա չէր գլխավորը ներկա դեպքում: Գլխավորն այն էր, որ ես այն ժամանակ մի կարգին չգիտեի էլ Փարիզյան կոմունայի պատմությունը: Ավելի ճիշտ՝ գիտեի՝ բայց տեղ-տեղ խառնում էի Ֆրանսիական մեծ հեղափոխության հետ: Մեղավորը, իհարկե, ես չէի, այլ այդ «մեծ» բառը, որովհետև ինչպե՞ս կարող էր «մեծ» անվանվել բուրժուական հեղափոխությունը: Կար-չկար՝ խոսքը Փարիզյան կոմունայի մասին էր:

Եվ ահա, իմ գլխում ստեղծվել էր մի շատ հետաքրքիր շիլաշփոթ՝ այդ երկու հեղափոխությունների մասին իմ կարդացած գրքերից ստեղծված: Եվ ոչ միայն իմ գլխում: Որքան հիշում եմ, «իմ» Փարիզյան կոմունային մասնակցում էին թե Մարատը, թե Ռոբեսպյերը, թե Դանտոնը...

Բարեբախտաբար, իմ բեմադրության փորձերը շուտով ընդհատվեցին: Իհարկե, ոչ թե նրա համար, որ ճարվեց մեկը, որը բռնեց իմ «մասնակի» սխալները, այլ որովհետև Համրմաթը մոտ էր, հարկավոր էր պիոներներին սովորեցնել ուրիշ շատ բաներ, իսկ ես զբաղեցրել էի ամբողջ կազմակերպությունը:

Ես անցա ուրիշ գործերի:

Պիոներներն սկսեցին ժամանել Լենինական: Ամեն առավոտ ես երկաթուղային կայարան էի տանում տեղական պիոներների մի քանի կոլեկտիվներ՝ նվագախմբի հետ միասին, ժամանողներին դիմավորելու համար:

Լենինականն ստացավ տոնական տեսք: Փողոցներով շարունակ անցնում էին անծանոթ պիոներների կոլեկտիվներ, ամեն քիչ թե շատ ազատ տարածության վրա տեղի էին ունենում տեղացիների և ժամանածների վերջին փորձերը: Մենք և ժամանած հրահանգիչները հանդիպում էինք, զրուցում, «փորձ փոխանակում» և այլն: Քիչ չէր պատահում, որ մենք և ժամանածները դուրս էինք գալիս հին ծանոթներ՝ դեռ որբանոցներից և սկաուտանոցներից:

Համրմաթն անցավ շատ շուքով: «Մրմ»-երը տեղի էին ունենում այժմյան ֆուտբոլի դաշտում, իսկ «աթ»-երը՝ Քաղլուսվարի թատրոնում:

Սա դեռ Համրմաթի պաշտոնական կողմն էր: Իսկ որքա՞ն ուրախություն փողոցներում, իջևանած վայրերում... Չի կարելի ասել, թե մենք մտերմացանք ժամանածների հետ, թեկուզ և ավելացնենք՝ «իսկույն» մտերմացանք: Պատանի հասակում այդպիսի հասկացողություն չկա: Հանդիպելիս մենք արդեն մտերիմներ էինք:

Ով բախտ է ունեցել մասնակցելու պիոներական այդպիսի հավաքների, հազիվ թե իր ողջ կյանքում մոռանա դրանց խանդավառությունն ու խնդությունը:

4

Համրմաթի օրերին լույս տեսավ «Լենինը պատկազմում» փոքրիկ ժողովածուն՝ «խմբագրությամբ Արմենի», այսինքն՝ դեռևս տասնութ տարիս չլրացած պատանու:

Ես հավաքել էի պատկոմների ստեղծագործությունները՝ նվիրված հազիվ կես տարի առաջ մահացած մեծ ղեկավարի հիշատակին և հրատարակել էի Համրմաթի տրամադրած փոքրիկ գումարով: Հավաքել էի ոչ միայն «անտիպ» նյութեր՝ անձամբ հեղինակներից, այլև ընտրել էի այն ժամանակներում առատորեն լույս տեսնող պատկոմական ձեռագիր ժուռնալներից և պատի թերթերից:

Որտեղի՞ց կարող էի իմանալ ես այն ժամանակ, որ դա լինելու է հայերեն լեզվով առաջին գեղարվեստական ժողովածուն Լենինի հիշատակին: Չէի կարող իմանալ նաև, որ այդ ժողովածուն շատ կարևոր դեր է խաղալու իմ անձնական կյանքում և գրական ճակատագրի մեջ: Եվ, վերջապես, չէի կարող մտածել, որ, քառասունհինգ տարի անց, Լենինի հարյուրամյակի կապակցությամբ, այդ համեստ գրքույկը ոգեկոչվելու էր տասնամյակների ժամանակաշերտի տակից և դառնալու է մեր պատանեկության ուշադրության առարկա:

Համրմաթի օրերին, 1924 թվի ամռան վերջերին, ժողովածուն վաճառվեց Լենինականում: Իսկ պատկոմական այդ համահայաստանյան հավաքից հետո գրքույկի տպաքանակի մի մասը ես ուղարկեցի Երևան՝ Պետհրատ, մեր մայրաքաղաքում ևս վաճառելու համար:

Անցավ մի տարի: Ես, մի քանի ուրիշների հետ, հավաքագրվեցի որպես ուսուցիչ, դեռ տասնինն տարիս չլրացած, մեկնելու համար Հայաստանի հեռավոր վայրերը՝ Մեղրու գյուղերը: Մեկնելով մի գնացք ավելի առաջ, քան իմ կոլեգաները, ես ուզում էի առավոտյան հասնել Երևան, ստանալ գրքույկի վաճառքից հասանելիք շատ փոքրիկ գումարը, ցերեկն անցկացնել Երևանում, իսկ երեկոյան կողմ նրանց հետ միասին շարունակել ճանապարհը՝ հաջորդ գնացքով: Բայց Չարենցն ինձ պահեց Երևանում: Այդ մասին ես մանրամասն գրել եմ իմ «Ակունքների մոտ» հուշերի մեջ:

Այդպիսով այդ փոքրիկ գրքույկը մեծ դեր խաղաց իմ կյանքում:

Ես երբեմն, իմ արխիվն աչքի անցկացնելիս, վերցնում էի «Լենինը պատկազմում»-ի ինձ մոտ պահված օրինակը, սիրով նայում, վերհիշում իմ պատանեկությունը, բայց մի առանձին կարևորություն չէի տալիս երբեմնի իմ կատարած համեստ գործին:

Բարեբախտաբար, մի քիչ այլ կերպ էր մտածում ժողովածուի մեջ նյութ ունեցող պատկոմներից մեկը, այժմ Մանկավարժական գիտությունների ակադեմիկոս Մ. Մազմանյանը, որի մոտ ևս, պահպանվել էր ժողովածուի մի օրինակը:

Մ. Մազմանյանը Լենինի հարյուրամյակի նախօրեին ժողովածուն տարել էր «Պիոներ կանչ»-ի խմբագրություն: Խմբագրությունը մեծ խանդավառությամբ էր ընդունել այդ հայտնագործությունը և թերթի մոտակա համարներից մեկում տպագրելով այդ մասին, կոչ էր արել պիոներներին՝ գտնել ժողովածուի բոլոր հեղինակներին:

Շատ ժամանակ չանցավ, երբ հայտնվեցին բոլոր հեղինակները՝ քառասունհինգ տարի հետո ողջ-առողջ, բացի մեկից, որի մասին հնարավոր չեղավ ստանալ ոչ մի տեղեկություն:

Քառասունհինգ տարի առաջ ցանված սերմը տվել էր իր պտուղները: Ու թեև ժողովածուի աշխատակիցներից միայն մեկը, միայն ես էի մնացել գրականության մեջ, բայց մյուսները դարձել էին շատ ավելի պիտանի մարդիկ.— ակադեմիկոս Գուրգեն Բաբաջանյան, ակադեմիկոս Միքայել Մազմանյան, Մոսկվայի խոշոր ճարտարապետներից մեկը՝ Գևորգ Չալտիկյան, ուսուցչուհի Քնարիկ Շիրակունի և այլք:

Շատ շուտով «Պիոներ կանչ»-ը մեզ նվիրեց ևս երկու էջ իր համարներից մեկում: Ապա, ևս մի անգամ: Փոքրիկ ժողովածուն, «խմբագրությամբ Արմենի» և աշխատակցությամբ ապագայում այդքան պիտանի դարձած մարդկանց, մեր պատանիների համար դարձավ ավագ սերնդից հասած մի ուսանելի օրինակ: Դե ի՞նչ, մենք արել էինք ինչ որ կարողացել էինք: Կարողացել էինք շատ քիչ, բայց այդ շատ քիչը եկել էր մեր հոգու խորը խորքից: Մենք գրել և տպագրել էինք անպաճույճ, պրիմիտիվ բանաստեղծություններ և արձակ նյութեր, բայց ոչինչ չունեինք ամաչելու: Ընդհակառակը, մենք հպարտ էինք, որ մեր կյանքի լուսաբացին մեր հոգին համակված էր եղել ամենամաքուր հույզերի սուրբ շողերով:

Եվ ահա, «Պիոներ կանչ»-ի խմբագրության նախաձեռնությամբ, մեզ, արդեն վաթսուն և ավելի տարեկան հին պիոներներիս, հավաքեցին ի մի... Ու թեև բոլորս չէ, որ չորս և կես տասնամյակների ընթացքում կորցրել էինք մեզանից ոմանց հետքը, բայց և այնպես այդ հանդիպումն առաջինն էր իր «լրիվ կազմով» և հուզիչ էր՝ արցունք կորզելու չափ...

Բավական էր, որ մենք մտնեինք խմբագրատուն և տեսնեինք այնտեղ մեր մյուս ընկերներին, որպեսզի իսկույն ցնդեին տասնամյակները և մենք մեզ պատկերացնեինք ու զգայինք որպես նախկին պատկոմները...

Մի քանիսին, որոնց չէինք տեսել այն օրերից ի վեր, մենք չճանաչեցինք: Բայց, դեռ հազիվ արտասանված նրանց անունները, նրանք ևս կորցրին իրենց ներկա, անծանոթ դիմագծերը և դրանց տակից հայտնվեցին մեր այնքա՛ն ծանոթ հին ընկերները…

— Այ տղա, դու դեռ չե՞ս գիրացել,— հարցրեց Քնարիկը Գուրգենին: Եվ Գուրգենը վաթսունն անց «տղա», ժպտաց: Կարծես մի քանի շաբաթ էր, որ նրանք չէին տեսել իրար:

Հուշեր, մտաբերումներ, թախծոտ կամ զվարթ հոգոցներ... Իսկ ներկա պիոներները, ներկա Քնարիկները, Գուրգեններն ու Գևորգները, մեր շուրջը կանգնած ու նստոտած, լուռ հետևում էին մեզ և, ով գիտե, մե՞նք էինք ավելի հուզված, թե՞ նրանք..

Պատկոմներ, Լենինը չկա,

Չկա մեր հայրը սիրալիր,

Նա, որ մեզ բոլորիս ասաց՝

Սովորիր, սովորիր, սովորիր...

Դա իմ երկու բանաստեղծություններից մեկն էր, որով սկսվում էր ժողովածուն: Կանգնել էին պիոներները և արտասանում էին այն, արտասանում էին ճիշտ այն կարգով, որը ես սահմանել էի ժողովածուի վերջում տրված ծանոթության մեջ և ինչպես որ արտասանել էին ուրիշ պիոներներ դեռ Համրմաթում.

«Բանաստեղծություն № 1-ը գրված է հատկապես կոլեկտիվ արտասանության համար: Այն տողերը, որոնք իրենց սկզբում չունեն պայմանական նշաններ՝ արտասանվում են մեկի կողմից:

Աստղանիշ ունեցողներն արտասանվելու են բոլոր արտասանողների մեկ վեցերորդի կողմից: Զրոյով նշանակվածներն արտասանվելու են բոլորի կողմից:

Նպատակահարմար է արտասանողների խումբը 30-ից ոչ պակաս: Աստղերով և զրոյով նշանակվածներն արտասանվելու են վանկերով»:

Ապա, մեկը մյուսին փոխարինելով, պիոներներն արտասանեցին մեր բոլորի բանաստեղծություններն ու արձակ նյութերը:

Եվ հանկարծ Գուրգեն Բաբաջանյանը բացականչեց.

— Ես երբեք չեմ մոռանա այս օրը: Հենց որ գնացի տուն՝ այս ամենի մասին կպատմեմ թոռնիկներիս…

Ինչպե՞ս թե՝ «թոռնիկներիս»... Ո՞ւմ թոռնիկներին... Մի՞թե հենց մենք ինքներս չենք թոռնիկներ…

Եվ ցնդեց պատրանքը, մենք վերադարձանք դեպի մեր ժամանակը, մեր տարիքը... Սպիտակ մազեր և ճաղատ, կնճիռներ և խորշոմներ... Բայց մենք իզուր չէր, որ ապրել էինք աշխարհում այդ քառասունհինգ տարիները: Մենք եղել էինք պիտանի մարդիկ, և այժմ էլ, եռանդով լի, շարունակում էինք՝ աշխատել՝ ամեն մեկս իր բնագավառում, որ ապրեն մեր շուրջը բոլորված «էրեխեքը», մեզանից լավ ապրեն, բայց մեզ պես ապրեն...

Եվ ապա մեզ դուրս հրավիրեցին Շահումյանի անվան հրապարակը: Այնտեղ մեզ էին սպասում մեր անվան պիոներական դրուժինաները՝ Գուրգեն Չալտիկյանի, Մկրտիչ Արմենի, Քնարիկ Շիրակունու, Միքայել Մազմանյանի...

Մոտ վազեցին պիոներները և մեր վզերին կապեցին կարմիր վզկապներ՝ ճիշտ և ճիշտ իրենց վզկապներից, ոչ ծերունական, այլ պատանեկան.... Եվ մենք հրապարակն ու մեր անվան դրուժինաները մի պահ տեսանք արցունքի մաքուր հեղուկի միջով…

Եվ ապա մենք՝ վաթսուն տարեկան և տասը տարեկան պիոներներս, եկանք Լենինի անվան հրապարակը, և տասը տարեկանները ողջունեցին վաթսուն տարեկաններին, որոնք արդեն չգիտեին, թե ինչ էր կատարվում նրանց շուրջը: Նրանք տեսնում էին միայն Լենինի արձանը, չնաշխարհիկ գեղեցկություն ունեցող հրապարակը, դրա պատանի տերերին, դրա և բոլոր այլ բարիքների ստեղծման վաթսունամյա մասնակիցներին: Բայց մի՞թե լիուլի բավական չէր այդ ամենը:

Եվ նրանք բոլորը տեսան, որ բոլորի կարմիր վզկապները կտրված էին այն կարմիր դրոշից, որը հավետ քանդակված էր մեծ առաջնորդի պատվանդանի վրա:

Համարյա թե կես դար է անցել այն օրերից, բայց չի լռել ու չի լռելու այդ օրերի երգը.

Խարույկով խարկենք

Գիշերներ կապույտ,

Մենք պիոներներ ենք՝

Բանվորի սերունդ:

Գալիս է փայլուն

Մի դարաշրջան,

Միշտ եղիր պատրաստ՝

Պիոներ ժրաջան:

Հնչում, հնչում է այդ երգն իմ ականջներում, հնչում է իմ հոգում: Երանի այն պատանիներին, որոնք այսօր անցնում են մայիսմեկյան ցույցի շարքերով՝ «Արևելք» հրթիռների մոդելները ձեռքերին: Բայց և երանի նրանց, ովքեր առաջին սերունդը դարձան պիոներիայի, ովքեր սկսեցին մշտահունչ այդ երգը:

1963, 1969